

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՍՈՒՆՔ


1915 թվական: Հայ ժողովրդի պատմության ամենից արհավիրացից և աղետաբեր տարին: Մահաարստո խուճապի մեջ էր ողջ արևմտահայությունը: Բայց վերահաս վտանգը չսասանեց հայի ապրելու կամքը և սեփական գոյության նկատմամբ հավատքը: Նա անդիմադիր զոհ չդարձավ միայն, այլ նաև սեփական արժանապատվությունը պաշտպանող մարտիկ՝ երբեմն անհավասար մարտերում գտնելու իր «իմացեալ մահը»:

Արդպիսի ըմբոստ ոգիներ էին նաև այն քսան մահապարտները, որոնց դեպի կանաչմարան տարավ օսմանյան Բարձր Դուռը:

Ահա Հայրենիքի ազատության սրբազան գաղափարի համար նահատակված այդ մարտիրոսների հետ է կապված պատմական այս մասունքը՝ արծաթյա փոքրիկ ձեռաց սուրբ խաչը: Այն պատկանում էր Կ. Պոլսի Մայր եկեղեցու ծիսակատար հանգուցյալ Տ. Գալուստ քահանա Պողոսյանին:

Այդ օրը թուրք ոստիկանը նրան տարավ զինվորական ատյան: Կեսգիշերին դուռը ճոճչաց մահագույծ: Ոստիկանը տեր հորը հրամայեց հետևել իրեն: Հայտնվեցին մի մույթ քանտախցում: Այս ու այն կողմ նրստած ու կանգնած էին 20 երիտասարդներ՝ խրոխտ կեցվածքով և արծվաչին հաչացքով: Տեղ հայրը սկսում էր հասկանալ: Պետք էր վերջին հաղորդությունը տալ մահապարտներին: Բայց... նա սրբատուփ չուներ: Ինչպե՞ս հաղորդություն տալ գաղափարի այս նվիրյալներին, որպեսզի խաղաղ հոգով իրենց ժողովրդի և Մայր եկեղեցու հետ միասնության մեջ նահատակվեն: Մարգարեացավ Տեղ Գալուստը. հանեց ձեռաց սուրբ խաչը, օրհնեց սենյակի մի անկյունում դրված ջուրը, ինքնամոռաց աղոթքով ջուրը փոխակերպեց սուրբ հաղորդության և բաշխեց իր ժողովրդի անվեհեր զավակներին՝ իբրև մարմին և արյուն Քրիստոսի:

«Յափտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:



Այս նվիրական մատուցող Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին է հանձնել Տեր Գալուստի որդին, որը նույնպես հավանաբար արհավիրքի ճամփաներից փրկվեց այս խաչի զորությամբ:

«Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱԶԳԷՆ
ՍՐԱՍՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վեհափառ Տեր,
Ես որդին եմ Մայր Եկեղեցույ վախճանեալ Գալուստ քահանայ Պողոսեանի: Այսօր առիթը կ'ունենամ հօրս ամենամեծ փափաքը իրականացնել՝ լանձնելով իր ձեռաց խաչը Ձերդ Ս. Օծույթեան:

1915 թուականի երեկոյեան ժամը հինգիս ուստիկան մը կու գայ և Տեր Գալուստ քահանան ուստիկանատուն կը հրափրէ, և հոն-

կից կ'առաջնորդեն զինքը զինուորական ատեան: Կէս գիշերին իրեն կ'իմացնեն 20 հայերու մահապատիժը, որոնց վերջին կրօնական արարողութիւնը պիտի կատարուէր. ասոնք այն հայերն էին, որոնք ամբաստանուած էին իբրև դաւաճան և կոմիտեճի: Ասոնք այն հալ կտրիճ երիտասարդներն էին, որոնց, հայ ազգին դատը պաշտպանելու համար, մահուան կառափնարանը անգամ չէր տկարացուցած իրենց վեհ և հերոս գաղափարը:

Հայրս այս սարսափազդու տեսարանին առջև ընկնուած, իր խաչով միայն ջուրը կ'օրհնէ փոխան սուրբ հաղորդութեան կը խմցնէ՝ անոնց:

Մատչիմ ի համբոյր ի Սուրբ Աջոյր,
Որդիական ծառայութեամբ՝

ԳԱԳԻԿ ՊՕՂՈՍԵԱՆ

Ստամբուլ,
27 փետրուար 1960

